ՀԱՅԿ. ՍՍՌ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Ն. Մ. ԱՅԼԱՄԱԶՅԱՆ

ՔԱՂՑԿԵՂԸ, ԵՎ ՊԱՅՔԱՐ ՆՐԱ ԴԵՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 1949

616-006-78 | 14502
Ա-52 | Ալշամաջյան, Հ. Մ.
Քաղցկեղը (ռակ) և
պայքար նրա դեմ.
3/IV

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԵՍՍԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

16-006.46
Ա. 52

Ն. Մ. ԱՅԱՄԱՊՅԱՆ

(Բժշկ. գիտ. թեկնածու)

ՔԱՂՑԿԵՂԸ (ՌԱԿ) ԵՎ ՊԱՅՔԱՐ ՆՐԱ ԴԵՄ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1949

А $\frac{\text{Ц}}{16590}$

АЙЛЯМАЗЯН Н. М.
РАК И БОРЬБА С НИМ
(На армянском языке)
Ереван, Армгиз, 1959 г.

ՔԱՂՑԿԵՂԸ ԲԱՎԱԿԱՆ ՏԱՐԱԾՎԱԾ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Է

Գոյություն ունեցող բոլոր հիվանդությունների մեջ քաղցկեղը համարվում է բավական տարածված հիվանդություններից մեկը։

Քաղցկեղով մարդիկ հիվանդանում են իրենց բոլոր հասակում, սկսած մանուկ հասակից մինչև զառամյալ դառնալը, սակայն ավելի հաճախ քաղցկեղով հիվանդանում են միջին տարիքից բարձր հասակ ունեցող կանայք և տղամարդիկ։

Այս նշանակում է, որ մարդիկ քաղցկեղով հիվանդանում են գլխավորապես իրենց մտավոր և ֆիզիկական ուժերի ծաղկման և աշխատանքի ամենաբեղմնավոր շրջանում։

Դրա համար էլ քաղցկեղի դեմ մղվող պայքարը մեզ համար խոշոր սոցիալական նշանակություն ունեցող խնդիրներից մեկն է համարվում։

Միայն ՍՍՌ Միության մեջ է, որ հակաքաղցկեղային պայքարին խոշոր ուշադրություն է դարձվում, համարելով այդ պետական գործ։

Քաղցկեղի դեմ պայքարի կազմակերպման գործին սովետական իշխանությունը յուրաքանչյուր տարի տասնյակ միլիոններ է տրամադրում, հակառակ կապիտալիստական աշխարհի երկրներին, որտեղ հակաքաղցկեղային պայքարի միջոցները ձեռք են բերվում բարեգործական նպատակներով կատարվող մասնավոր հանգանակություններից։

Հակաքաղցկեղային պայքարի հաջողության գրավականներից մեկն էլ այն է, որ սովետական երկրում ծավալվող սանիտարական լուսավորության աշխատանքների շնորհիվ, քաղցկեղի մասին եղած գիտելիքները դառնում են մեր լայն մասսաների սեփականությունը։

Նոր գիտելիքներով զինված, սովետական ամեն մի քաղաքացի իր ակտիվ աշխատանքով օժանդակում է քաղցկեղի դեմ տարվող մեծ պայքարին:

Մարդկությանը հասցրած քաղցկեղի վնասները շատ մեծ են, բավական է միայն նշել, որ յուրաքանչյուր տարի ամբողջ աշխարհում քաղցկեղից մահանում են մոտ մեկ և կես միլիոն մարդ:

Մի այլ օրինակ, որը կրկին ցույց է տալիս, թե ինչպիսի ահագին վնասներ է հասցնում քաղցկեղը, դա այն է, որ 45 տարեկանից բարձր հասակում մահացած 100 հոգուց, մոտավորապես 10-ը մահանում են քաղցկեղից:

Այսպիսի խոշոր թվով մահացության գլխավոր պատճառը հանդիսանում է քաղցկեղով հիվանդների ոչ ժամանակին բժշկական օգնության դիմելը: Թե ինչու քաղցկեղով հիվանդները ուշացած են դիմում բժշկական օգնության, դրա հիմնական պատճառը այն է, որ քաղցկեղ հիվանդության զարգացման սկզբնական շրջանում, առանձին անհանգստություններ չեն լինում, (ինչպես օրինակ, ցավի զգացմունք, ջերմություն և այլն), իսկ եթե որոշ անհանգստություններ արտահայտված են լինում, ապա այնքան աննշան չափով, որ մեծ մասամբ հիվանդների կողմից ուշադրության չեն արժանանում:

Բուժման տեսակետից այս հարցը մեծ նշանակություն ունի, որովհետև մեզ հայտնի է, որ քաղցկեղով հիվանդների բուժման արդյունքները խիստ կերպով պայմանավորված են այն խնդրի հետ, թե արդյոք հիվանդը ինչ վիճակում է դիմել բժշկական օգնության. հիվանդության սկզբնական շրջանում, թե՞ բավական ուշացած, երբ արդեն քաղցկեղային պրոցեսը տարածված է լինում օրգանիզմում:

Նշանակում է, հակաքաղցկեղային պայքարում գլխավորը, դա քաղցկեղի ժամանակին բուժման ձեռնարկումն է:

Քաղցկեղը իր զարգացման սկզբնական շրջանում հանդես է գալիս հանգույց-ուռուցքի ձևով, որը կարող է առաջանալ մարդու մարմնի զանազան հատվածներում և օրգաններում:

Քաղցկեղային ուռուցքն սկզբնական շրջանում զարգանում է, որպես տեղական հիվանդություն, և եթե այդ ժամանակ ձեռնարկվում է բուժումը ու հեռացվում ուռուցքը, հիվանդները մեծ մասամբ բոլորովին առողջանում են, իսկ եթե անցնում է ժամանակ, քաղցկեղային ուռուցքը քայքայում է շրջապատող հյուսվածքներն ու

տարածվում է հարևան օրգանների մեջ, այդ դեպքում բուժումը դառնում է դժվարին գործ:

Գոյություն ունի քաղցկեղի տարածման մի այլ եղանակ ևս, երբ ժամանակ քաղցկեղային բջիջները ընկնելով արյան և ավշային անոթների մեջ, կարող են տեղափոխվել մարմնի տարբեր օրգաններ և առաջացնել նրանց մեջ նոր ուռուցքներ:

Բոլոր նորագոյացությունները (ուռուցքները), որոնք առաջանում են մարդու օրգանիզմում, բաժանվում են երկու խմբի—չարորակ և բարորակ նորագոյացությունների:

1. Բարորակ ուռուցքները սովորաբար աճում են դանդաղ, բավական ցայտուն կերպով, սահմանազատված են լինում իրենց շըրջապատող հյուսվածքներից և շատ անգամ պարփակված են լինում առանձին թաղանթի մեջ:

Բարորակ ուռուցքները միշտ էլ մնում են որպես տեղական հիվանդություն և չեն տարածվում հարևան հյուսվածքների և օրգանների մեջ:

2. Չարորակ ուռուցքները, որոնց շարքին է պատկանում նաև քաղցկեղը, տարբերվում են բարորակ ուռուցքներից նրանով, որ աճում են բավական արագ և հեշտությամբ ներթափանցում են հարևան հյուսվածքների և օրգանների մեջ:

Եթե ժամանակին չձեռնարկվի չարորակ ուռուցքի բուժումը, նա կարող է տարածվել օրգանիզմի համար կենսական նշանակություն ունեցող օրգանների մեջ, քայքայել նրանց և լուրջ վտանգ սպառնալ հիվանդի կյանքին: Ի միջի այլոց պետք է ասել, որ քիչ չեն այն դեպքերը, երբ բարորակ ուռուցքները, այս կամ այն պատճառների ազդեցության հետևանքով, կերպափոխվում և վեր են ածվում չարորակ ուռուցքների, դրա համար էլ, բոլոր հայտնաբերված ուռուցքներն անկախ նրանց բնույթից, նպատակահարմար է ժամանակին հեռացնել օպերացիայի միջոցով:

ՔԱՂՑԿԵՂԸ (ՌԱԿԸ) ԲՈՒԺԵԼԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Է

Ներկայումս դեռ քիչ չէ այն մարդկանց թիվը, որոնք կարծում են, թե քաղցկեղը առհասարակ անբուժելի հիվանդություն է: Այս միանգամայն սխալ կարծիք է և հետևանք է սովետական բըժշկության նվաճումներին և առհասարակ ժամանակակից բուժման մեթոդներին ծանոթ չլինելուն:

Քաղցկեղի բուժման համար այժմս գոյություն ունի երեք հիմնական եղանակ. ա) ուռուցքի հեռացումը օպերացիայի միջոցով. բ) քաղցկեղի բուժումը ռենտգենի և ռադիումի ճառագայթներով և գ) այս երկու եղանակների միասին գործադրումը—բուժում օպերացիայի և ճառագայթների միջոցով: Սակայն այս եղանակներով բուժումը կարող է լավ արդյունքներ տալ միմիայն այն դեպքում, եթե քաղցկեղի բուժումը ձեռնարկված է հիվանդության վաղ շրջանում:

Եթե ամեն մի հիվանդության դեպքում կարևոր նշանակություն ունի բուժման նախաձեռնումը ժամանակին, ապա քաղցկեղի դեպքում նրա ժամանակին դիագնոզելը և բուժելը վճռական նշանակություն ունի, որովհետև հիվանդության հետագա շրջաններում, քաղցկեղային պրոցեսն արդեն տարածված է լինում օրգանիզմում և բուժման գործը բավական դժվար է դառնում: Թե որքան կարևոր է վաղ շրջանում քաղցկեղի բուժումը, միանգամայն պարզ է դառնում հետևյալ օրինակներից:

1. Եթե ժամանակին է ձեռնարկված կրծքագեղձի քաղցկեղի բուժումը, ապա հիվանդների 75 տոկոսը լրիվ առողջանում է, իսկ եթե բուժումը ձեռնարկված է հիվանդության բարձրագույն արված շրջանում, ապա առողջացումը 20 տոկոսից չի անցնում:

2. Արգանդի քաղցկեղի բուժման վաղ նախաձեռնումը տալիս է 80 տոկոսի առողջացում, իսկ ուշացած դեպքերում՝ 10 տոկոսից ոչ ավելի:

3. Նույնը կարելի է ասել մաշկի քաղցկեղի նկատմամբ, որից ժամանակին բուժվելու դեպքում հիվանդների մոտ 95 տոկոսը առողջանում է, իսկ ուշանալու դեպքում՝ 30 տոկոսը միայն:

Թե ինչ պատճառներից է առաջանում քաղցկեղ հիվանդությունը, դեռ մինչև այսօր էլ ամբողջովին պարզված չէ, հայտնի է միայն, որ գոյություն ունեն մի շարք գրգռիչ ֆակտորներ, որոնք կարող են պատճառ հանդիսանալ և կամ աջակցել քաղցկեղի առաջացմանը:

Այդ գրգռիչ միջոցները լինում են քիմիական, տերմիկ և մեխանիկական, որոնց տեղական ազդեցության հետևանքով օրգանիզմի զանազան հատվածներում կարող են առաջանալ քաղցկեղային ուռուցքներ: Օրինակ, գյուղական աղքատակշության, երբեմն և ամառատների դեմքի վրա. բավական հաճախ առաջանում է մաշ-

կի քաղցկեղ, որի հիմնական պատճառը համարվում է արևի ճառագայթների և քամիների չափից ավելի ազդեցությունը (գըրգռումը)։

Քաղցկեղը կարող է առաջանալ նաև այնպիսի պատճառներից և երևույթներից, որոնց վրա առօրյա կյանքում շատ անգամ ուշադրություն չենք դարձնում։ Այսպես օրինակ, հայտնի է, որ լեզվի վրա կարող են քաղցկեղային խոցեր գոյանալ փչացած ատամներից, կամ նրանց սուր եզրերից առաջացած քերծվածքներից, կամ անհարմար պրոտեզների ճնշման հետևանքով լորձաթաղանթի վրա առաջացած վնասվածքներից։ Նշանակում է, բերանի խոռոչում քաղցկեղ հիվանդության առաջացումը կանխելու համար, անհրաժեշտ է ուշադիր լինել և ժամանակին հեռացնել այդ փչացած ատամները, կարգի բերել անհարմար պրոտեզները, որոնք կարող են սիստեմատիկ կերպով գրգռել, քերծվածքներ և վնասվածքներ առաջացնել բերանի լորձաթաղանթի և լեզվի վրա։

Հայտնի է նաև, որ մի շարք հիվանդություններ, որոնք ժամանակին չբուժվելու հետևանքով խրոնիկական բնույթ են ստանում, հետագայում կարող են հիմք ծառայել քաղցկեղ հիվանդության առաջանալուն։ Այդ հիվանդությունների շարքին են պատկանում կրծքագեղձի խրոնիկ բորբոքումները, կանանց սեռական օրգանների մի քանի բորբոքային հիվանդությունները, արգանդի պարանոցի վրա առաջացած երկարատև չլավացող էրոզիաները (մակերեսային խոցեր), մաշկի վրա երկարատև չլավացող խոցերը և, վերջապես, շրթունքի վրա առաջացած ճաքերը և վերքերը։

Կարևոր է հիշատակել մի հանգամանք ևս, որ մի շարք մաշկային գոյացություններ, որոնց բավական հաճախ հանդիպում ենք առօրյա կյանքում բնածին խալերի, գորտնուկների ձևով — անուշադրության հետևանքով երբ քերծվում, գրգռվում և ճնշվում են հիվանդների կողմից, կամ դարմանում են դեղորայքով, կարող են կրկին հիմք ծառայել քաղցկեղ հիվանդության առաջացման համար։

Այս ամենը նշանակում է, որ քաղցկեղ հիվանդության առաջացումը կանխելու գլխավոր պայմաններից մեկն էլ հանդիսանում է խրոնիկական հիվանդություններից ժամանակին բուժվելը, որը

հանդիսանում է հակաբաղդիկեղային պայքարի կարևոր խնդիրներից մեկը։

Իհարկե, անհամեմատ ավելի հեշտ է բուժվել խրոնիկական հիվանդություններից և այն բոլոր վնասվածքներից, որոնք պատճառ կարող են ծառայել քաղցկեղ հիվանդության զարգացման համար, քան թե իրեն՝ քաղցկեղ հիվանդությունից, որի բուժման համար անհրաժեշտ է մասնագետ բժիշկ և որոշ հնարավորություններ (ռենտգեն և ռադիում)։

Առհասարակ քաղցկեղ հիվանդությունը և այդ թվում մաշկի, բերանի խոռոչի, լորձաթաղանթի, լեղվի քաղցկեղը չի կարելի բուժել դեղորայքով (յոդի լուծույթով, փոշիներով և այլն) և դանազան անալին միջոցներով, դա կլինի ուղղակի թանկագին ժամանակի վատնում։

Քաղցկեղ հիվանդության դեպքում հարկավոր է անմիջապես դիմել մասնագետ բժշկի՝ հիմնական բուժում ստանալու համար։

Պետք է հաստատա դիտենալ, որ շրթունքի, լեղվի և մաշկի քաղցկեղը շատ լավ կարելի է բուժել օպերացիայի, ռադիումի և ռենտգենի ճառագայթների միջոցով։

Դեղորայքով և այլ միջոցներով բուժումը ոչ միայն չի օգնում, այլ և կարող է վատացնել քաղցկեղի վիճակը։ Նույնը կարելի է ասել կերակրափողի և կոկորդի քաղցկեղի նկատմամբ, երբ կերակրանյութերի կլանման, ձայնի խոսողության և շնչողության դժվարացման հետևանքով, հիվանդները երբեմն չիմանալով իրենց հիվանդության լրջությունը դիմում են բուժման դանազան միջոցների։

Սակայն հայտնի է, որ կերակրափողի և կոկորդի քաղցկեղի հիմնական բուժումը հնարավոր է միայն օպերացիայի և ռենտգեն ճառագայթների միջոցով, այլ եղանակներով բուժումը հիվանդին հասցնում է անբուժելի դիմակի։

Ոմանք կարծում են, որ մարդու սեռը մեծ կարևորություն ունի քաղցկեղով հիվանդանալու հարցում։ Պետք է դիտենալ, որ տղամարդիկ և դանազան քաղցկեղով հիվանդանում են գրեթե հավասար չափով, այն տարբերությամբ, որ կանայք ավելի հաճախ հիվանդանում են արգանդի և կրծքագեղձի քաղցկեղով, իսկ տղամարդիկ ստամոքսի, կոկորդի և այլ օրգանների քաղցկեղով։

Ինչպես կանայք, նույնպես և տղամարդիկ հիվանդանում են գրեթե բոլոր օրգանների քաղցկեղով, բայց ամենից հաճախ քաղցկեղային պրոցեսը զարգանում է մի քանի կարևոր օրգաններում, որոնց մասին անհրաժեշտ է գիտենալ: Այդ օրգանների շարքին են պատկանում՝ ստամոքսը, կերակրափողը, թոքերը, մաշկը, կրծքագեղձը, կանանց սեռ օրգանները և այլն:

Ստամոքսի քաղցկեղը ամենից հաճախ հանդիպող հիվանդություններից մեկն է, նա կազմում է բոլոր քաղցկեղային հիվանդությունների մոտ 40 տոկոսը:

Ստամոքսի քաղցկեղով ամենից շատ հիվանդանում են տղամարդիկ, քան թե կանայք: Շատ անգամ նա զարգանում է ստամոքսի խրոնիկ կատարների հողի վրա: Ինչպես հայտնի է, ստամոքսի կատարները մեծ մասամբ զարգանում են անկանոն սնվելուց, շատ ալկոհոլ գործածելուց, ծխելուց, զանազան գրգռիչ, սուր, ինչպես և տաք սնունդ գործածելուց: Այստեղից հետևություն, որ կանոնավոր և ժամանակին սնվելը, ոգելից խմիչքներ չգործածելը, չծխելը, զանազան գրգռիչ սննդանյութեր չօգտագործելը կարող են վերջին հաշվով կանխել ստամոքսի քաղցկեղի առաջացումը:

Ստամոքսի քաղցկեղի զարգացման սկզբնական շրջանը երբեմն ընթանում է հիվանդի համար աննկատելի կերպով և կամ ուղեկցվում է այնպիսի ախտանշաններով, որոնք սովորաբար լինում են նաև կատարների ժամանակ:

Ստամոքսի քաղցկեղի դեպքում շատ անգամ առաջանում է ախորժակի բացակայություն, սրտխառնություն, փսխում, զկռտոց, որը հաճախ լինում է նեխված ձվի հոտով, երբեմն էլ լինում են ցավեր սրտի գդալի սահմաններում: Եթե նման հիվանդների մոտ նկատվում է նաև արյան պակասություն, նիհարում և աստիճանաբար աշխատունակության կորուստ, նշանակում է առանց ժամանակ կորցնելու պետք է դիմել բժշկի ստուգման ենթարկելու ստամոքսի հյութը և միաժամանակ ստամոքսը հետազոտել ռենտգենյան ճառագայթներով: Իսկ եթե այս ախտանիշների վրա ժամանակին ուշադրություն չեն դարձնում, համարելով այն չնչին երևույթներ, ստամոքսի քաղցկեղը կարող է այն աստիճան զարգանալ, որ այլևս բուժումը հնարավոր չլինի:

Չպետք է մոռանալ, որ հիվանդը ինչքան շուտ է դիմում բժշկական օգնության, այնքան մեծ է առողջացման երաշխիքը: Պետք է գիտենալ, որ թանկ է ամեն մի շաբաթը հիվանդի համար:

Ստամոքսի քաղցկեղի դեպքում գոյություն ունի բուժման միայն մի եղանակ. դա օպերացիան է, որի ժամանակ հեռացվում է քաղցկեղային ուռուցքը:

Չպետք է վախենալ օպերացիայի ենթարկվելուց, նա տալիս է կայուն արդյունքներ, եթե միայն օպերացիան կատարվում է հիվանդության սկզբնական շրջանում:

Այս ամենը խոսում են այն մասին, որ ստամոքսի քաղցկեղի դեպքում, ամեն ինչ պայմանավորված է ժամանակին բժշկական օգնության դիմելու հարցի հետ և **որ ժամանակն է որոշում հիվանդության ելքը:**

Որկորի քաղցկեղը բավական ծանր հիվանդություն է և սովորաբար զգացվում է հիվանդների կողմից գրեթե այն ժամանակ, երբ ուռուցքը այնքան է մեծանում, որ նեղացնում է կերակրափողի անցքը և հիվանդը դժվարանում է կուլ տալ:

Հետագայում հիվանդության զարգացման հետևանքով կլանման պրոցեսը գնալով ավելի դժվարանում է և երբեմն էլ այս ամենին ավելանում է ցավի զգացումը:

Կրծքագեղձի քաղցկեղով սովորաբար հիվանդանում են կանայք, հազվադեպ դեպքերում նաև տղամարդիկ:

Հիվանդությունն իր սկզբնական շրջանում հանդես է գալիս կրծքագեղձում փոքրիկ կոշտուկների ձևով, որոնք գնալով կարող են մեծանալ և բավական զգալի դառնալ կնոջ համար: Սկզբնական հանգույցի կամ կոշտուկի մեծացման հետևանքով փոխվում է կրծքագեղձի պտուկի դիրքը, որը կարծես փոքրանում և ձգվում է դեպի ներս:

Նույն ժամանակամիջոցում մեծանում են թևատակի ավշային հանգույցները, որոնք շատ անգամ նույնիսկ շոշափվում են հիվանդների կողմից:

Կրծքագեղձի քաղցկեղի սկզբնական ախտանշանը, որն անմիջապես նկատվում է կանանց կողմից և կարող է անհանգստության պատճառել, հատկապես կրծքով երեխա չկերակրող կանանց մոտ, դա պտուկներից առաջացած արտադրությունն է, որը սկզբում կարող է լինել թափանցիկ, հետագայում պղտոր, իսկ եր-

րեմն էլ արյունային բնույթի։ Կրծքագեղձի քաղցկեղը իր զարգացման սկզբնական շրջանում ցավերով չի ընթանում։

Կրծքագեղձի շրջանում խտացումներ նկատելու դեպքում, կինն առանց ժամանակ կորցնելու, պետք է դիմի բժշկին, հաստատ համոզված լինելով, որ ինչպես բոլոր դեպքերում, նույնպես և կրծքագեղձերի քաղցկեղի էֆեկտիվ բուժման ելքը պայմանավորված է ժամանակին ձեռնարկված հիմնական բուժման հետ։

Ոչ պակաս անհանգստացուցիչ պատճառ պիտի համարել և կասկածանքի առիթ ծառայի, երբ կնոջ մոտ գոյություն ունի պըտուկի սահմաններում երկարատև չառողջացող մաշկային վերքեր, կամ խանգարումներ։

Դրա համար էլ կանայք խոշոր կարևորություն պետք է տան կրծքագեղձի, ինչպես և պտուկների խնամքին, հատկապես երեխաներին կրծքի կաթով կերակրելու շրջանում։ Որովհետև այդ ժամանակամիջոցումն է, որ կանայք ավելի հաճախ են հիվանդանում կրծքագեղձի և պտուկների բորբոքային հիվանդություններով, որոնք հետագայում վերածվելով խրոնիկ ընթացքի, կարող են պատճառ հանդիսանալ կամ աջակցել քաղցկեղի առաջացմանը։

Կրծքագեղձի քաղցկեղի առաջացմանը բավական նպաստում են նաև հաճախակի կատարվող աբորտները և նրանց հետևանքով առաջացած կնոջ սեռական օրգանների բորբոքային հիվանդությունները։

Նշանակում է կանայք խուսափելով աբորտները կատարելուց, կանխում են ոչ միայն կրծքագեղձի և սեռական օրգանների խրոնիկ բորբոքային հիվանդությունները, այլ և նրանց հետ կապված քաղցկեղ հիվանդության առաջացման վտանգը։

ԱՐԳԱՆԴԻ ՔԱՂՑԿԵՂԸ

Արգանդի քաղցկեղը, ինչպես և կրծքագեղձի քաղցկեղը, անհամեմատ ավելի հեշտ է ճանաչել, քան մյուս մնացած ներքին օրգանները քաղցկեղով հիվանդանալու դեպքում, որովհետև վերջիններս տեսանելի չեն և պահանջում են զանազան մեթոդներով քննություն կատարել։

Չնայած դրան, դեռ այսօր էլ, բժշկական օգնության դիմող արգանդի քաղցկեղով հիվանդ կանանց բավական զգալի տոկոսը

կազմում են այնպիսի ուշացած դեպքեր, որոնց բուժումը շատ դժվար է։

Այս հանգամանքը շատ անգամ հնարավոր է քաղցկեղ հիվանդության ախտանիշներին ծանոթ չլինելուն, երբեմն էլ դեպի իր առողջությունն ունեցած կնոջ անուշադիր վերաբերմունքի։

Այդ պատճառով էլ անհրաժեշտ է, որ ամեն մի կին դիտենա, թե ինչպես է սկսվում արգանդի քաղցկեղը, ինչպիսի ախտանշաններ ունի այդ հիվանդությունը, և ինչպես պետք է տարբերել այն ուրիշ հիվանդություններից։

Հիվանդությունների մեծագույն մասը, որոնց թվում և կանանց սեռական օրգանների բորբոքային հիվանդությունները, արտահայտվում են դալի զգացմունքով, որը և շատ անգամ պատճառ է դառնում կնոջ բժշկական օգնության դիմելու։

Դժբախտաբար արգանդի քաղցկեղը սկզբնական շրջանում սովորաբար ցավերով չի ընթանում, նրանք առաջանում են միմիայն քաղցկեղի բարձրթող արված (ուշացած) շրջանում մի շարք բարդությունների առաջացման հետևանքով։

Արգանդի քաղցկեղի սկզբնական շրջանի ամենակարևոր ախտանշաններից մեկը պետք է համարել հեշտոցից հոսքի (արտադրություն) երևան գալը, որը սկզբում լինում է շճա-թարախային բնույթի։

Քաղցկեղային պրոցեսի զարգացման հետևանքով արտադրության բնույթը դեղատով փոխվում է, և նմանվում մսաջրի, որը հետագայում շատ անգամ վեր է ածվում արյունահոսությունների, արյան անոթների վնասման հետևանքով։

Առհասարակ արյունային, կամ արյունախառն արտադրություն, ինչպես և արյունահոսության հանկարծ գալը միջդաշտանային ժամանակամիջոցում, հատկապես 40-ից բարձր հասակ ունեցող կանանց մոտ, միշտ պետք է կասկածանքի առիթ ծառայի սկսվող քաղցկեղի նկատմամբ։

Իմարկե, արյունային արտադրություններ կամ արյունահոսություններ կարող են առաջանալ նաև սեռական օրգանների բորբոքային և այլ հիվանդությունների ժամանակ։

Դրա համար էլ լավ է, որ յուրաքանչյուր կին, հատկապես դաշտանադադարի հասակում, գերազանցի մեկ անգամ ևս դիմելու մասնագետ բժշկի, ստուգելու համար իր առողջությունը, քան թե

անուշադրության մատնելով, իրեն դատապարտի քաղցկեղով հիվանդանալու մեծ վտանգին։

Արգանդի քաղցկեղը, հատկապես իր սկզբնական շրջանում, բուժելի հիվանդություն է։

Եթե ժամանակին արգանդի քաղցկեղը չի բուժվում, հետագայում քաղցկեղային պրոցեսը զարգանալով ոչ միայն վնասում է արգանդը, այլ և անցնում է հարևան օրգաններին, կնոջ համար ստեղծելով այնպիսի ծանր վիճակ, որից բուժումը երբեմն անհնարին է դառնում։

Ոմանք կարծում են, թե արգանդի քաղցկեղի բուժումը օպերացիայի կամ ռենտգեն-ռադիումի ճառագայթների միջոցով կնոջ օրգանիզմում այնպիսի փոփոխություններ է առաջացնում, որ նրանք կարող են կորցնել ոչ միայն իրենց կանացիությունը, այլև աշխատունակությունը։ Իհարկե այդ կարծիքը հիշյա չէ։ Արգանդի հեռացումը նշանակում է կնոջը զրկել միմիայն հղիանալու հնարավորությունից և ուրիշ ոչինչ։

Իսկ աշխատունակության նկատմամբ պետք է որոշակի գիտենալ, որ ո՛չ միայն արգանդի, այլ և կրծքագեղձի, մաշկի և մի բանի այլ օրգանների քաղցկեղի դեպքերում, եթե հիվանդները ժամանակին են ստացել բուժական օգնություն, կարող են երկար տարիներ ապրել և շարունակել իրենց հանրօգուտ աշխատանքը։

Այժմ, մեր իրականության մեջ, քիչ չեն այն մարդկանց թիվը, որոնք ժամանակին բուժվելով քաղցկեղ հիվանդությունից, այսօր պահպանում են իրենց լիակատար աշխատունակությունը։

Սակայն քաղցկեղով անցյալում տառապող ամեն մի հիվանդ, պետք է վատա՞ գիտենա, որ եթե ինքը ստացել է հիմնական բուժում և այժմ գործնականորեն իրեն առողջ է զգում, այնուամենայնիվ, նա չի դադարում բժշկի հսկողության տակ մնալուց։ Նա պարտավոր է ժամանակ առ ժամանակ ստուգման ենթարկվելու, որպեսզի բժշկի կողմից ժամանակին կանխվի քաղցկեղ հիվանդու-

ցման վերսկսումը: Նամանավանդ այն դեպքերում, երբ փոքր ինչ կասկած կա այն մասին, որ քաղցկեղով հիվանդը իր բուժումը ստացել է ոչ թե հիվանդության վաղ շրջաններում, այլ քիչ ուշացած, կամ բարձիթող արված շրջանում:

Քաղցկեղը վարակիչ հիվանդություն չէ, այդ պատճառով քաղցկեղով հիվանդները շրջապատի համար վտանգավոր չեն կարող լինել: Մի խուսափեք քաղցկեղով հիվանդներին խնամելուց, դրանով դուք թեթևացնում եք նրանց դրությունը:

Փոքր ինչ կասկածի դեպքում դիմեցեք մասնագետ բժշկի, պարզելու ձեր առողջության վիճակը:

Չմոռանալ, որ քաղցկեղի լիակատար բուժման գրավականը պայմանավորված է հիվանդի ժամանակին բուժական օգնության դիմելու հետ:

Քաղցկեղը բուժել տնային միջոցներով, դա նշանակում է ժամանակ կորցնել և կյանքը դնել վտանգի տակ:

Քաղցկեղը կանխելու համար անհրաժեշտ է, որ բոլոր խրոնիկական հիվանդությունները, երկարատև չլավացող խոցերը և զանազան գոյացությունները, անկախ նրանց բնույթից, հեռացվեն, որոնք երբեմն կարող են պատճառ հանդիսանալ քաղցկեղ առաջանալուն:

Բժշկական օգնության պետք է դիմել ոչ միայն այն ժամանակ, երբ քաղցկեղի նկատմամբ կասկած գոյություն ունի, այլ յուրաքանչյուր առողջ մարդ, հատկապես միջին տարիքից բարձր հասակում, տարին մեկ-երկու անգամ պետք է բժշկի դիմի՝ իր առողջությունը ստուգելու համար:

Աշխարհում միմիայն ՍՍՌՄ-ումն է, որ հակաքաղցկեղային պայքարը կարող է խոշոր հաջողությունների հասնել, որովհետև այդ գործը մեր երկրում համարվում է պետական գործ, որտեղ ստեղծված է հսկայական օնկոլոգիական հիմնարկների ցանց, բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ, որոնք եռանդուն կերպով աշխատում են քաղցկեղ հիվանդության վաղ շրջանի

հայտաբերման և բուժման նոր մեթոդների վրա։ Հակաքաղցկեղային այս խոշոր ոլորտում, բացի մեր առողջապահական հիմնարկներից, բավական դրական մասնակցություն ունի նաև մեր երկրի աշխատավորությունը, հատկապես սանիտարական լուսավորության աշխատանքներում։ Ամեն մի գիտակից քաղաքացի իր շրջապատողների մեջ քաղցկեղի հասցրած վնասների մասին համապատասխան բացատրական աշխատանք տանելով, շատ շատերին փրկում է մարդկության դաժան թշնամի՝ քաղցկեղ հիվանդության հիրաններից։

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
А 16590

Պատ. խմբագիր՝ դոց. Ի. Ե. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Վ. ԴԱՎԹՅԱՆ

Կոնտր. սրբագրիչ՝ Հ. ՂՈՋԱՐՈՍՅԱՆ

ՎՖ 02569 Պատվեր № 502 Տիրաժ 3.000

Հանձնված է արտադրության 15/VI 1949 թ.
Ստորագրված է տպագրության 29/VI 1949 թ.
Տպագրական 1, հեղ. ¾ մամուլ

Հայպոլիգրաֆ-հրատի վարչության № 2 տպարան, Սպանդարյանի փող. № 86,
Երևան, 1949 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0010092

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

ЦЕНА
50 к.
16590